ՀՀ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՌԻՍԿԵՐԸ

Հիմնաբառեր. *արտահանում, բազմազանեցում, կենտրոնացում, Հերֆինդալ-Հիրշմանի համաթիվ*



Շուշան ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՀՊՏՀ ասպիրանտ

2014 թ. ավարտել է ՀՊՏՀ-ն և ընդունվել ասպիրանտուրա: 2016 թ. աշխատանքի է անցել ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնում՝ սկզբում որպես կրտսեր հետազոտող, իսկ 2018 թ.-ից առայսօր՝ որպես փորձագետ: Հեղինակ և համահեղինակ է 9 գիտական աշխատանքների:

Ըստ միջազգային առևտրի ավանդական տեսությունների՝ բաց տնտեսության պայմաններում երկրները մասնագիտանում են այն ապրանքների արտադրության մեջ, որոնց առումով ունեն համեմատական առավելություններ: Փորձնական ուսումնասիրությունները, սակայն, ցույց են տալիս, որ որքան բարձր է երկրի զարգացման մակարդակը, այնքան բարձր է նաև արտահանման բազմազանեցման աստիճանը: Բազմազանեցման օգտին բերվող հիմնական փաստարկն այն է, որ վերջինս նվազեցնում է արտաքին շոկերի նկատմամբ խոցելիությունը և արտահանումից ստացվող եկամուտների անկայունությունը:

ՀՀ արտահանումը վերջին քսան տարիների ընթացքում թեև դրևսորել է կենտրոնացման նվազման միտում, այնուամենայնիվ, այն շարունակում է մնալ բարձր կենտրոնացած առաջնային ապրանքների արտահանման ոլորտում:

Միջազգային առևտրի վաղ տեսություններում, երբ բացատրվում են առևտրից օգուտները, առկա է հետևյալ պնդումը. տնտեսության բացության պայմաններում երկրները մասնագիտանում են այն ապրանքների արտադրության մեջ, որոնց առումով ունեն համեմատական առավելություններ: Իսկ համեմատական առավելությունները բացատրվում են արտադրողականության հարաբերական տարբերությամբ (Դ. Ռիկարդոյի տեսություն) կամ արտադրության գործոնների հարաբերական առատությամբ (Հեքշեր-Օհլինի տեսություն): Ավելի նոր տնտեսագիտական գրականությունը հարցականի տակ է դնում մասնագիտացման օգուտնե-



ԳԾԱՊԱՏԿԵՐ 1

Արտահանման կենտրոնացման ցուցանիշն ըստ բնակչության 1 շնչին ընկնող եկամուտների, 2018 թ.

որը՝ տնտեսական աճի տեսանկյունից: Գոյություն ունեն բազմաթիվ վերլուծություններ թե՛ բազմազանեցման և թե՛ մասնագիտացման օգտին: Էմպիրիկ վերլուծությունները, սակայն, ցույց են տալիս, որ արտահանման զամբյուղի բազմազանեցման և եկամտի մակարդակի միջև առկա է մեծ կախվածություն[1]:

Դիտարկենք երկրների արտահանման կենտրոնացման աստիճանն ըստ բնակչության 1 շնչին ընկնող եկամուտների (գծապատկեր 1): Արտահանման կենտրոնացման աստիճանը գնահատվել է Հերֆինդալ-Հիրշմանի համաթվի միջոցով, որը 0-1-ի սահմաններում գնահատում է երկրի կախվածությունը որոշակի թվով ապրանքների արտահանումից: Որքան երկրի ցուցանիշը մոտ է 1-ին, այնքան բարձր է կենտրոնացման աստիճանը:

Ընդհանուր առմամբ, եկամուտների բարձր մակարդակ ունեցող երկրների արտահանումը նվազ կենտրոնացած է: Զարգացած երկրների արտահանման կենտրոնացման ցուցանիշը 2018 թ. կազմել է 0.066[2], այն դեպքում, երբ զարգացող երկրներում դա եղել է 0.1: Բացառություն են բնական ռեսուրսներով հարուստ (նավթ, գազ) երկրները, որոնց արտահանումը չափազանց կենտրոնացած է:

Հիմնական փաստարկը բազմազանեցման օգտին այն է, որ դրա շնորհիվ նվազում է կախվածությունը փոքրաքանակ տնտեսական աղբյուրներից՝ երկիրը դարձնելով նվազ խոցելի առանձին ապրանքների շուկաներում անկումների և դրանց հետևող՝ արտահանումից ստացվող եկամուտների անկայունության նկատմամբ[3]:

Արտահանման կենտրոնացման բացասական ազդեցությունը տնտեսության վրա մեծապես կախված է արտահանվող ապրանքների բնույթից: Արտահանվող հիմնական ապրանքի պահանջարկի փոփոխության դեպքում արտահանումից ստացվող մուտքերը կարող են ապակայունացնել տնտեսությունը և բարդացնել տնտեսական քաղաքականության մշակումը, ինչը հաճախ տեղի է ունենում առաջնային (հումքային) ապրանքների շուկայում (վառելիք, մետաղներ, գյուղատնտեսական ապրանքներ): Վերջին շրջանում նավթի գնի

[1] Dany Bahar, Diversification or specialization: What is the path to growth and development?, November 2016, https://www.brookings.edu/wp-content/uploads/2016/11/global-20161104-diversification.pdf
[2] https://unctadstat.unctad.org/wds/TableViewer/tableView.aspx
[3] H. Carlos de Oliveira, E. Jegu, V. Eliane Santos, Dynamics and determinants of export diversification in Brazil from 2003 to 2013, 2018, https://www.scielo.br/scielo.php?script=sci_arttext&pid=S0104-06182020000100029&tlng=en



ԳԾԱՊԱՏԿԵՐ 2

ՀՀ-ից արտահանվող ապրանքատեսակների թիվն ըստ ԱՏԳԱԱ 6-նիշ դասակարգման, 1999-2019 թթ.[4]

տատանումները դրա վառ օրինակն են: Բարձր ռիսկային ոլորտներում կենտրոնացած են հիմնականում զարգացող երկրները: Զարգացած երկրների արտահանումն առավելապես վերաբերում է «անվտանգ» ոլորտներին կամ բավական բազմազանեցված է: Օրինակ՝ Հարավային Կորեան այլ զարգացած երկրների համեմատությամբ ունի արտահանման կենտրոնացման հարաբերականորեն բարձր միավոր (0.2), սակայն, ի տարբերություն զարգացող երկրների, վերջինս հումքային ապրանքներ արտահանող չէ: Հարավկորեական արտահանման կեսից ավելին կենտրոնացած է մեքենաշինական արդյունաբերության մեջ (նավեր, մեքենաներ, համակարգիչներ և այլ էլեկտրոնիկա)[5]:

Արտահանման բազմազանեցման վերլուծության համար, որպես կանոն, կիրառում են երեք տեսակի ցուցանիշներ՝ արտահանվող ապրանքատեսակների թիվ, ամենաշատ արտահանվող ապրանքների տեսակարար կշիռ արտահանման մեջ (արտահանման կենտրոնացման պարզ գնահատում) և արտահանման կենտրոնացման համաթիվ (ինդեքս) (արտահանման կենտրոնացման առավել համալիր գնահատում)[6]:

Գծապատկեր 2-ում ներկայացված է ՀՀ-ից արտահանվող ապրանքատեսակների թիվը (ըստ ԱՏԳԱԱ 6-նիշ դասակարգման), որը, ինչպես երևում է, վերջին 20 տարվա ընթացքում կրկնապատկվել է՝ 1084-ից հասնելով 2023-ի: Ապրանքատեսակների թվի աճը դրական միտում է, սակայն դա թույլ չի տալիս պատկերացում կազմել արտահանման կառուցվածքի փոփոխության մասին: Այդ 2023 արտադրատեսակից առավել շատ արտահանվող 5 ապրանքին բաժին է ընկնում արտահանման 57,5%-ը, 10-ին՝ 70.3%-ը: 1999 թ. 5 առավել շատ արտահանվող ապրանքներին բաժին է ընկնել ընդհանուր արտահանման 57%-ը, 10-ին՝ 70.8 %-ը:

Արտահանման կառուցվածքի փոփոխության մասին ամբողջական պատկերացում կարելի է կազմել՝ դիտարկելով կենտրոնացման ցուցանիշի փոփոխությունը ժամանակի ընթացքում: Ինչպես երևում է գծապատկեր 3-ից, այդ ցուցանիշը 1999 թ. 0.377–ից 2012 թ. նվազել է մինչև 0.246 միավոր, այնուհետև նկատվել է աճ. 2019 թ. դա կազմել է 0,293 միավոր: Հետևապես՝ թեև առկա է որոշակի դրական միտում, այդուհանդերձ, կենտրոնացման ցուցանիշը դեռևս բարձր է զարգացող երկրների նույն ցուցանիշի համեմատ (0.1):

ՀՀ արտահանման կառուցվածքը բնութագրվում է հումքային ապրանքների մեծ մասնաբաժնով: Գերիշխող ապրանքային

[4] Գծապատկերը կազմվել է ըստ Համաշխարհային բանկի տվյալների:
[5] https://knoema.com/infographics/lujqesc/export-concentration-index-a-measure-of-economic-vulnerability
[6] Broadman Harry G., From Disintegration to Reintegration: Eastern Europe and the Former Soviet Union in International Trade. Washington, DC: World Bank, 2005.



ԳԾԱՊԱՏԿԵՐ 3

ՀՀ արտահանման կենտրոնացման ցուցանիշը, 1999-2019 թթ.[7]

խումբը հանքաքարն ու մետաղներն են, որոնց կշիռն ընդհանուր արտահանման մեջ 2019 թ. կազմել է 35.3%՝ 2009 թ. 48.9%-ի փոխարեն: Նման անկումը պայմանավորված է մետաղների (հատկապես՝ գունավոր) տեսակարար կշռի կայուն նվազմամբ: Վերջին տասը տարվա ընթացքում պղնձի արտահանման մասնաբաժինը 9,5%-ից նվազել է մինչև 0,3%, ալյումինինը՝ 8,8%-ից մինչև 3,8%, երկաթինը՝ 13,6%-ից մինչև 5,7%: Հանքաքարի արտահանման տեսակարար կշիռն ավելացել է՝ 2009 թ.



ԳԾԱՊԱՏԿԵՐ 4

ՀՀ արտահանման կառուցվածքի փոփոխությունն ըստ ապրանքախմբերի, 2009-2019 թթ.[8]

[7] Գծապատկերը կազմվել է ըստ UNCTAD-ի տվյալների:
[8] Գծապատկերը կազմվել է ըստ UN Comtrade-ի տվյալների:

16.9%-ից 2019 թ. դառնալով 25.5%: Թանկարժեք և կիսաթանկարժեք քարերի, ինչպես նաև ոգելից և ոչ ոգելից խմիչքների արտահանման կշիռը գրեթե չի փոփոխել: Նշված ժամանակահատվածում կայուն կերպով աճել է ծխախոտի (2009 թ.՝ 1.3%, 2019 թ.՝ 11.1%) և հագուստի (2009 թ.՝ 0,8%, 2019 թ.՝ 4.8%) արտահանման մասնաբաժինը (գծապատկեր 4):

Ամփոփելով նշենք, որ վերջին քսան տարվա ընթացքում, բազմազանեցման տեսանկյունից, ՀՀ արտահանման կառուցվածքում էական տեղաշարժեր չեն գրանցվել: Արտահանումն ինչպես նախկինում, այնպես էլ հիմա ունի չափազանց արտահայտված հումքային ուղղվածություն, կենտրոնացած է հարաբերականորեն ռիսկային ոլորտներում, ինչն էլ երկիրը խոցելի է դարձնում այս շուկաներում տեղի ունեցող անկումների և դրանց հետևող՝ արտահանումից ստացվող եկամուտների անկայունության նկատմամբ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Broadman Harry G., From Disintegration to Reintegration: Eastern Europe and the Former Soviet Union in International Trade. Washington, DC: World Bank. 2005.
2. Dany Bahar,"Diversification or specialization: What is the path to growth and development?", November 2016, https://www.brookings.edu/wp-content/uploads/2016/11/global-20161104-diversification.pdf
3. H. Carlos de Oliveira, E. Jegu, V. Eliane Santos, Dynamics and determinants of export diversification in Brazil from 2003 to 2013, 2018.
4. https://knoema.com/infographics/lujqesc/export-concentration-index-a-measure-of-economic-vulnerability
5. https://unctadstat.unctad.org
6. Comtrade.un.org/data/

Шушан МОВСИСЯН
Эксперт исследовательского центра «Амберд», АГЭУ

АРМЕНИЯ И МИР

СТРУКТУРНЫЕ РИСКИ ЭКСПОРТА РА

Традиционные теории международной торговли утверждают, что в условиях открытой экономики страны будут специализироваться в производстве товаров, по которым они имеют сравнительные преимущества. Эмпирические исследования, однако, показывают, что чем выше уровень развития страны, тем выше степень диверсификации экспорта. Основной аргумент в пользу диверсификации заключается в том, что последний снижает уязвимость к внешним шокам и нестабильность доходов от экспорта.

Хотя за последние двадцать лет экспорт РА показал тенденцию к снижению концентрации, тем не менее, он остается высоко сконцентрированным на экспорте сырьевых товаров.

Ключевые слова: *экспорт, диверсификация, специализация, индекс Херфиндаля - Хиршмана*

Shushan MOVSISYAN
Expert at "Amberd" Research Center, ASUE

ARMENIA AND WORLD

STRUCTURAL RISKS OF EXPORT OF THE RA

Early theories of international trade state that, in open economy, countries will specialize in production of goods, in which they have comparative advantage. Yet, empirical analyses show that countries with higher level of development have greater export diversification. The main argument for the importance of diversification is that it reduces country's vulnerability to external shocks and volatility of export earnings.

Although over the past few years RA export demonstrated decline in terms of concentration, it remains highly concentrated in the sector of primary commodities.

Keywords: *export, diversification, specialization, Herfindahl–Hirschman index*